## Հով այվանին քնել ես

Հով այվանին քնել ես, յաման յար,
Ամպ հովանին բռնել ես, յաման յար,
Վրեդ թափի վարդի ջուր, յաման յար,
Իմանաս՝ քրտընել ես, յաման յար:

Սարերը կանաչ խոտով, յաման յար,
Սիրտս լիքն է կարոտով, յաման յար,
Յարըս ընձնից բեզարած, յաման յար,
Տուն կուգա հանդի մոտով, յաման յար:

Ղարսա բերդը բլիլ է, յաման յար,
Յարըս տակին քնիլ է, յաման յար,
Սարերը կանաչ խոտով, յաման յար,
Սիրտըս լիքն է գարունով, յաման յար:

Լուսնակը կլորել է, յաման յար,
Տարիքս բոլորել է, յաման յար,
Յար քո լուսնակ էրեսից, յաման յար,
Իմ սիրտը մոլորել է, յաման յար:

Ջուր ա գալի լափ տալեն, յաման յար,
Էրկու խընձոր ծափ տալեն, յաման յար,
Հրես էկավ իմ յարը, յաման յար,
Թուխ գդակը թափ տալեն, յաման յար:

Դաղձ եմ քաղել շաղերով, յաման յար,
Դրել հովին մաղերով, յաման յար,
Յարս հանդիցը հենց գա, յաման յար,
Առաջն էլնեմ տաղերով, յաման յար:

Կարմիր քարը տաշած ա, յաման յար,
Բոյս ղալամ քաշած ա, յաման յար,

Ինչ անեմ որ քաշած ա, յաման յար,
Սիրտս հալած մաշած ա, յաման յար:

Կանաչ արտը հաց տարա, յաման յար,
Յարիս տեսա ետ դառա, յաման յար,
Խնձոր տըվավ՝ ես չառա, յաման յար,
Էս ի՞նչ բեբախտ յար դառա, յաման յար: